

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № ՀԽ-7

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարին կից
հասարակական խորհրդի նիստի

ք. Երևան

18 դեկտեմբերի 2018 թ., ժամը՝ 14.00

Նիստի նախագահ՝

Գաբրիել Ղազարյան

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի
նախարարի պաշտոնակատար

Խորհրդի անդամներ՝

Արշամ Սարգսյան

«Սյունիքի մարզի աթլետիկայի ֆեդերացիա»
հասարակական կազմակերպություն

Լիլիթ Մակարյան

Գյումրու երիտասարդական պալատ

Անժելա Բարխուդարյան

հոգեբան

Էռնեստ Ավանեսով

մանկավարժական գիտությունների թեկնածու,
դոցենտ

Սամվել Մկոյան

«Զավախքին աջակցություն» հիմնադրամ

Յուրի Ալեքսանյան

Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտե

ՕՐԱԿԱՐԳ

1. Ազգային հավաքական թիմերի ընդհանուր սպորտային պատրաստության գործընթացում ընդգրկված մարզիչների և հարակից մասնագետների համար «Հոգեբանական ազդեցության մեթոդների կիրառումը սպորտային պատրաստության գործընթացում» (կիրառման հնարավորությունները և ուղղվածությունը) թեմայով գործնական սեմինար (կլոր սեղան) կազմակերպելու անհրաժեշտության մասին:
2. ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և Արցախի Հանրապետության հանրակրթական դպրոցներում սովորողների շրջանում անցկացվող «Սպորտլանդիա» և «Սպարտակիադա» մարզական միջոցառումների համայնքային մակարդակով կազմակերպելու կարևորության և դրանց իրականացման մասին:
3. Դպրոցականների ֆիզիկական դաստիարակության նոր՝ այլընտրանքային, սպորտայնացման տեխնոլոգիայով դասերի իրականացման համար «Ընտրած մարզաձևի վրա հիմնված ֆիզիկական դաստիարակություն» չափորոշի ու ծրագրի ներդրման մասին:

Օրակարգի 1-ին հարցի քննարկում

Հոգեբան Անժելա Բարխուդարյանը խոսել է մարզաձևերի ազգային հավաքական թիմերի ընդհանուր սպորտային պատրաստության գործընթացում ընդգրկված մարզիչների, բժիշկների, մերսոլների և մյուս մասնագետների համար հոգեբանական գործնական սեմինարի կազմակերպման անհրաժեշտության մասին:

Ելույթ են ունեցել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի պաշտոնակատար Գաբրիել Ղազարյանը, «Զավախքին աջակցություն» հիմնադրամի ներկայացուցիչ Սամվել Մկոյանը:

Որոշվել է մշակել և ներկայացնել սեմինարին հաջորդող միջոցառումների ցանկ և գործողությունների հստակ ծրագիր:

Օրակարգի 2-րդ հարցի քննարկում

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Էռնեստ Ավանեսովը ներկաների ուշադրությունն է հրավիրել հանրակրթական դպրոցների աշակերտների համար անցկացվող մարզական միջոցառումների համայնքային փուլերը նույնպես բարձր մակարդակով կազմակերպելու և անցկացնելու կարևորության վրա:

Ելույթ են ունեցել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի պաշտոնակատար Գաբրիել Ղազարյանը, Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի ներկայացուցիչ Յուրի Ալեքսանյանը:

Որոշվել է Հայաստանի Հանրապետության մարզերի, Երևան քաղաքի և Արցախի Հանրապետության հանրակրթական դպրոցների աշակերտների համար անցկացվող «Սպորտլանդիա» և «Սպարտակիադա» մարզական միջոցառումների համայնքային փուլերին մասնակից դարձնել նաև նախարարին կից հասարակական խորհրդի անդամներին:


Օրակարգի 3-րդ հարցի քննարկում

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Էռնեստ Ավանեսովը ներկայացրել է դպրոցականների ֆիզիկական դաստիարակության նոր՝ այլընտրանքային, սպորտայնացման տեխնոլոգիայով դասերի իրականացման մասին իր դիտարկումները:

Ելույթ են ունեցել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի պաշտոնակատար Գաբրիել Ղազարյանը, «Սյունիքի մարզի աթլետիկայի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության նախագահ Արշամ Սարգսյանը, հոգեբան Անժելա Բարխուդարյանը:

Որոշվել է նախ անցկացնել մասնագիտական և փորձագիտական
ուսումնասիրություններ, այնուհետև արդյունքները ներկայացնել հանրային
քննարկման:

Հասարակական խորհրդի նիստի նախագահ՝



Գ. Ղազարյան